ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2019թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻԽԱՅԻԼ ԲՈՐԻՍԻ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2801-րդ տարեդարձի առթիվ, հայկական մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, համաշխարհային մշակութային արժեքների պահպանման գործում ունեցած ակնառու վաստակի, երկարամյա և բեղմնավոր գործունեության համար Էրմիտաժ թանգարանի գլխավոր տնօրեն, ակադեմիկոս Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻԽԱՅԻԼ ԲՈՐԻՍԻ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միխայիլ Բորիսի Պիոտրովսկին ծնվել է 1944թ. դեկտեմբերի 9-ին Երևանում՝ ակադեմիկոս, Պետական Էրմիտաժ թանգարանի տնօրեն, հնագետ Բորիս Պիոտրովսկու և հայուհի Հռիփսիմե Ջանփոլադյան-Պիոտրովսկու ընտանիքում:

1961-1967թթ. սովորել է Լենինգրադի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի արաբական բանասիրության բաժնում:

1965-1966 թթ. վերապատրաստվել է Կահիրեի համալսարանում:

1967-1991թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում, ավարտել է ասպիրանտուրան և զբաղեցրել է տարբեր պաշտոններ:

1973-1976թթ. աշխատել է Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության Հասարակական գիտությունների բարձրագույն դպրոցում՝ որպես թարգմանիչ և ուսուցիչ:

Հոր՝ Բորիս Պիոտրովսկու մահից հետո, Միխայիլ Պիոտրովսկին 1991թ. հրավիրվել է Պետական Էրմիտաժ՝ որպես գիտական աշխատանքների գծով տնօրենի առաջին տեղակալ, իսկ 1992թ. հուլիսին ՌԴ կառավարության որոշմամբ նշանակվել է Պետական Էրմիտաժի տնօրեն և մինչ օրս ղեկավարում է այն:

2003թ. հանդիսանում է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի թանգարանային գործի և հուշարձանների պահպանության ամբիոնի վարիչ:

2011թ. ղեկավարում է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Հին Արևելքի բաժինը, 2013թ.՝ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետի դեկան:

Միխայիլ Պիոտրովսկին Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահության, ՌԴ մշակույթի նախարարության խորհրդի և Սանկտ Պետերբուրգի գիտական կենտրոնի, Հումանիտար գիտությունների ակադեմիայի գործող և Գերմանիայի հնագիտական ինստիտուտի թղթակից և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ռուսաստանի կոմիտեի անդամ է, Ռուսաստանի թանգարանների միության նախագահն է: Նա գրականության և արվեստի բնագավառում ՌԴ նախագահի մրցանակի դափնեկիր է, պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության Պատվո շքանշանով և Ֆրանսիայի Պատվո Լեգեոնի շքանշանով:

Հաշվի առնելով Միխայիլ Պիոտրովսկու սերտ կապերը Հայաստանի հետ, բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Միխայիլ Պիոտրովսկին 2008 թվականին ընտրվել է ԳԱԱ արտասահմանյան անդամ: Միխայիլ Պիոտրովսկին համագործակցում է ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի հետ՝ բարելավման ու կատարելագործման մշակութաբանական և նյութագիտական փորձաքննությունների բնագավառում և իրականացնում փորձի փոխանակում:

Ավելի քան 250 աշխատությունների հեղինակ է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ակադեմիկոս Միխայիլ Պիոտրովսկու ներդրած ավանդն ու ակնառու վաստակը մշակույթի զարգացման և մշակութային հարաբերությունների պահպանման բնագավառում, ինչպես նաև երկարամյա և բեղմնավոր գործունեությունը՝ առաջարկվում է Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻԽԱՅԻԼ ԲՈՐԻՍԻ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻԽԱՅԻԼ ԲՈՐԻՍԻ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ